INTERNATIONAL MONETARY FUND
EXTERNAL RELATIONS DEPARTMENT

Մամլո հաղորդագրություն թիվ
ՇՏԱՊ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Արժույթի միջազգային
հիմնադրամ
Վաշինգտոն, Կ.Օ. 20431 ԱՄՆ

Աշխատակազմի մակարդակով ԱՄՀ-ը ձեռք է բերում համաձայնություն Հայաստանի հետ «Երկարաձգվող ֆինանսավորման» և « Երկարաձգվող վարկավորման» եռամյա ծրագրերի շուրջ

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) առաքելությունը, պրն. Մարկ Լյուիսի գլխավորությամբ, մայիսի 6-ից 19-ը այցելել է Երևան: Այցի վերջում պրն. Լյուիսը արել է հետևյալ հայտարարությունը.

«Առաքելությունն աշխատակազմի մակարդակով համաձայնության է եկել իշխանությունների հետ «Երկարաձգվող ֆինանսավորման » («EFF») և «Երկարաձգվող վարկավորման» (ECF) շրջանակում պայմանավորվածությունների վրա հենվող ծրագրի շուրջ: Աշխատակազմի մակարդակով ձեռք բերված համաձայնությունը ենթակա է հաստատման ԱՄՀ-ի ղեկավարության և Գործադիր խորհրդի կողմից: Նախատեսվում է, որ Գործադիր խորհրդի կողմից ծրագրի հայտի քննարկումը տեղի կունենա հունիսի վերջին: Ծրագրի շրջանակում հասանելի ֆինանսավորումը (քվոտայի 290 տոկոս) կկազմի 392 միլիոն ԱՄՆ դոլար (267 միլիոն ՓՀԻ), որը կընդգրկի մինչև 2013թ. հունիսը ներառյալ ժամանակաշրջանը: Խորհրդի կողմից ծրագրի հաստատումը հնարավորություն կտա Հայաստանին օգտագործել շուրջ 52 միլիոն ԱՄՆ դոլարի գումար:

«Թեև տնտեսական պայմանները դեռևս ծանր են, սակայն Հայաստանի տնտեսությունն աստիճանաբար վերականգնվում է: Ակնկալվում է, որ 2010թ. աճը կսկսի վերականգնվել, արտաքին փոխանցումների ծավալը վերականգնվում է, պետական ֆինանսների վիճակը բարելավվել է: Գնաճը դեռևս բարձր է՝ կապված առաջարկի տարբեր ցնցումների հետ, սակայն 2010թ. ընթացքում այն պետք է աստիճանաբար նվազի:

«Այնուամենայնիվ, թեև ճգնաժամն ավարտվել է, ի հայտ են եկել կարևոր միջնաժամկետ մարտահրավերներ՝ աճի խթանում և միաժամանակ աղքատության կրճատում, պարտքի կուտակման հակադարձում և ֆինանսական կայունության պահպանում:

«Հետամուտ լինելով այս խնդիրներին՝ իշխանությունները հանձն են առել իրականացնել կուռ մակրոտնտեսական քաղաքականություններ՝ առաջարկվող «EFF/ECF» ծրագրի շրջանակում: Հարկաբյուջետային քաղաքականությունը կշարունակի աջակցել տնտեսական ակտիվությանը, սակայն, վերականգնման տեմպերի կայունացման հետ մեկտեղ, բյուջեի դեֆիցիտն աստիճանաբար կնվազեցվի՝ պետական պարտքի կայունությունն ապահովելու նպատակով: Իշխանությունները մտադիր են հարկային վարչարարության բարելավումների միջոցով ընդլայնել հարկման բազան: Բացի այդ, նրանք կշարունակեն բարելավել ծախսերի հասցեականությունը և արդյունավետությունը՝ միևնույն ժամանակ ապահովելով սոցիալական և կապիտալ ծախսերի գծով բավարար հատկացումներ և ձեռնարկելով հետագա քայլեր՝ ուղղված սոցիալական ապահովության ցանցի կատարելագործման միջոցով կարիքավորների պաշտպանությանը: Գնաճի ցածր մակարդակի պահպանումը կշարունակի լինել դրամավարկային քաղաքականության կարևորագույն նպատակներից մեկը: Տարվա ընթացքում առաջարկի ճնշումների մեղմացման հետ մեկտեղ գնաճի մակարդակը կարող է ընկնել:

«Կառուցվածքային բարեփոխումների առումով ծրագիրը ներառում է հարկային վարչարարության հետևողական բարեփոխումների փաթեթ՝ ուղղված հարկ վճարողների իրավունքների պաշտպանությանը, որոնք, ի վերջո, կնպաստեն պետական ֆինանսների կուռ դիրքի ապահովմանը և գործարարության միջավայրի բարելավմանը: Ինչ վերաբերում է ֆինանսական հատվածին, ապա ճգնաժամի պայմաններում Հայաստանի բանկային համակարգը դրսևորել է դիմակայման ունակություն: Տնտեսական ակտիվությանն աջակցելու նպատակով իշխանությունները մտադիր են շարունակել զարգացնել ֆինանսական միջնորդությունը:

«Նոր «EFF/ECF» ծրագիրը պետք է հնարավորություն տա Հայաստանին հաղթահարել իր միջնաժամկետ մարտահրավերները, ինչը կնպաստի տնտեսության վերականգնման տեմպերի պահպանմանը, վճարային հաշվեկշռի ամրապնդմանը և կհանգեցնի աղքատության կրճատման ուղղությամբ շարունակական առաջընթացի ապահովմանը:

«Առաքելությունը ցանկանում է իր երախտիքն արտահայտել իշխանություններին հյուրընկալության և արգասաբեր համագործակցության համար:»